

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

Ինչո՞ւ կանգ մեր շրջապատին մէջ

Աստուած իւրաքանչիւր մարդ կը դնէ յատուկ շրջապատի մը մէջ, յատուկ նպատակով մը: Մեր պարտականութիւնն է գտնել այն նպատակը, որուն համար Աստուած մեզ դրած է մեր շրջապատին մէջ: Հարց տանք մենք մեզի, թէ ի՞նչ է մեր միջավայրին մէջ գոյութիւն ունեցող այն պակասութիւնը, որ Աստուած կ'ուզէ լրացնել մեր մամբով: Ան ի՞նչ պատգամ ունի փոխանցելիք մեր միջոցաւ՝ մեր դրացիին: Ի՞նչ բան կ'ուզէ մեր մամբով սրբագրել մեր գործընկերներուն կեանքին մէջ: Ո՞վ է այն տկարը, որուն պէտք է նեցուկ կանգնիլ: Եթէ մարդիկ սորվին իրարու պակասութիւնները լրացնել, փոխանակ զանոնք մատի փաթեցնել ընելու, այն ատեն խաղաղութիւնը կը տիրէ եւ Յիսուս կը փառաւորուի:

ՄԻԱՄՆԱԲԱՐ ԱՂՕԹԵՆՔ

Սրբուհի Աստուածածին եւ Յովհաննէս Կարապետին, սուրբ Ստեփանոս Նախավկային, սուրբ Գրիգոր Լուսաւորիչին եւ Քու բոլոր սուրբ վկաներուդ բարեխօսութեամբ լսէ՛ ինծի՛ եղկելիս, եւ ողորմէ՛ մեղաւորիս: Փնտռէ՛ կորսուածս, ձեռք մեկնէ՛ գործիս, առաջնորդէ՛ մոլորածս, խաւարէն դէպի լոյս հանէ՛ զիս եւ ազատութիւն շնորհէ՛ հոգիիս: Հաստատէ՛ քու սիրոյդ մէջ եւ բեւեռէ՛ Քու երկիւղիդ: Մաքրէ՛ հոգիս տանառը եւ մօտս օթեւանէ՛: Փակէ՛ մեղքերուս դուռը եւ շուրջս բոլոր պարսպէ՛ ոտիս, չար ու անիրաւ մարդէն փրկէ՛ զիս, առաքիւնութեան գործերով զարդարէ՛ եւ պարգեւէ՛ Քու անհատ երանութիւնդ: Ողորմէ՛ մեզի՛ ողջերուս, եւ պայծառացնելով լուսաւորէ՛ մեր ննջեցեալներուն հոգիները:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ'ՈՒԶԵՍ...

ԵՐԲ ՄԵՂՔԵՐՈՒ ԾԱՆՌՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԶԳԱՍ, ԵՒ ՀՈԳԻԴ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՍԲ ԹԵԹԵՒՆԱԼՈՒ ԿԸ ՏԵՆՉԱՅ ԿԱՐԴԱ՝ Սաղմոս 6

Տէ՛ր, գայրոյթիդ մէջ մի՛ յանդիմաներ զիս, բարկութեանդ մէջ մի՛ պատժեր զիս:

Ողորմէ՛ ինծի՛ Տէ՛ր, տկար եմ ես: Բժշկէ՛ զիս, որովհետեւ մի՛նչեւ ուկորներս կը դողամ:

Հոգիս ծանր խոովքի մէջ է. մի՛նչեւ ե՞րբ, Տէ՛ր:

Դարձի՛ր, Տէ՛ր, եւ փրկէ՛ զիս. ազատէ՛ զիս մահուանէն, որովհետեւ ողորմած ես:

Որովհետեւ մահուան մէջ ո՞վ պիտի յիշէ քեզ. անդրաշխարհին մէջ ո՞վ շնորհակալութիւն պիտի յայտնէ քեզի:

Հեծեծելէն յոգնեցայ, ամէն գիշեր եւ լացով լուացի իմ մահի՞նս, եւ իմ արցունքներովս թրջեցի անկողինս:

Աչքս մաշեցաւ ողբալէն, տկարացաւ նեղութիւններէս:


Հեռացէ՛ք ինձմէ՛ դուք բոլորդ, որ անիրաւութիւն կը գործէք, որովհետեւ Տէ՛ր՛ լսեց իմ աղօթքս, եւ խնդրանքս ընդունեց:

Թող ամչնան ու սարսափի մատուռին բոլոր թշնամիներս, ամօթով մնան եւ իսկոյն հեռանան:

Սիրելի ընթերցող, ՃՐԱԳ- թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- [facebook-ի էջ jerak ճրագ թերթ](#)



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍՔԻ ԽՍ ՈՏՔԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ԸԱԽԻՆՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍԴ.119-105)

ԺԳ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ , 26 ԱՊՐԻԼ 2020 ԹԻԻ 17

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ Գործք 9.23-31: Ա. Պետրոս 2. 1-10 ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ 2.23-3.12

ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ (ԿԱՆԱԶ ԿԻՐԱԿԻ)

Չատիկի տօնին, մինչ Յիսուս Երուսաղէմ կը գտնուէր, շատեր հաւատացին իրեն, երբ տեսան անոր գործած հրաշքները: Սակայն Յիսուս ինքզինք չէր վստահեր անոնց, որովհետեւ բոլորն ալ կը ճանչնար եւ պէտք չունէր ռեւէ մէկուն մասին ուրիշին վկայութեան, քանի ինք գիտէր թէ ի՞նչ կայ այդ մարդուն սիրտին մէջ:

Նիկողդէնոս անունով փարիսեցի մարդ մը կար, հրեայ իշխան մը, որ գիշերով Յիսուսի մօտ եկաւ եւ ըսաւ անոր. «Վարդապետ, գիտե՞նք, որ դուն Աստուծոյ կողմէ՛ դրկուած ուսուցիչ մըն ես, որովհետեւ ո՛չ որ կրնայ գործել քու կատարած հրաշքներդ, եթէ Աստուած անոր հետ չըլլայ»:

Յիսուս պատասխանեց անոր. «Հաստատ գիտցիր, որ եթէ մէկը վերստին չծնի՝ չի կրնար տեսնել Աստուծոյ արքայութիւնը»:

Նիկողդէնոս հարցուց անոր. «Ծեր մարդ մը ինչպէ՞ս կրնայ նորէն ծնիլ: Կարելի՞ քան է, որ ան կրկին մտնէ իր մօր որովայնը եւ ծնի»:

Յիսուս պատասխանեց. «Վստահ եղի՛ր, որ եթէ մէկը ջուրէն եւ Հոգիէն չծնի՝ չի կրնար երկինքի արքայութիւնը մտնել, որովհետեւ մարմինէն ծնածը մարմին է, իսկ Հոգիէն ծնածը՝ հոգի: Դուն մի՛ զարմանար, որ քեզի ըսի՝ թէ պէտք է կրկին ծնիք: Հովը, ուր որ ուզէ կը փչէ. դուն անոր ձայնը կը լսես, բայց չես գիտեր թէ ուրկէ կու գայ եւ ուր կ'երթայ: Նոյնպէս են բոլոր անոնք, որոնք Հոգիէն կը ծնին»:

Նիկողդէնոս հարցուց. «Ինչպէ՞ս կը պատահի ստիկա»:

Յիսուս պատասխանեց. «Դուն, որ Իսրայէլի ժողովուրդին վրայ ուսուցիչ կարգուած ես, ստիկա չե՞ս գիտեր: Վստահ եղի՛ր, թէ ինչ որ գիտե՞նք՝ կը խօսինք եւ ինչ որ տեսանք՝ անոր մասին կը վկայենք, բայց մեր վկայութիւնը չէք ընդունիր: Եթէ երկրաւոր բաներու մասին խօսեցայ ձեզի եւ չհաւատացիք, ինչպէ՞ս պիտի հաւատար ինծի եթէ երկնաւոր բաներու մասին խօսիմ»:

ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԸ

9.23-31

Ժամանակ մը վերջ, Դամասկոսի հրեաները որոշեցին Սոդոսը սպաննել: Սակայն Սոդոս իմացաւ անոնց նենգութիւնը, թէ՛ գիշեր ցերեկ կը հսկէին քաղաքին դռներուն առջեւ, որպէսզի զինք սպաննեն: Ուստի հաւատացեալները զինք գիշեր մը գամբիւղի մը մէջ դնելով պարիսպէն վար իջեցուցին:

Սոդոս Երուսաղէմ եկաւ եւ կը ջանար հաւատացեալներուն հետ շփման մէջ մտնել. բայց բոլորն ալ կը վախնային իրմէ չհաւատալով, թէ Քրիստոսի աշակերտ դարձած է: Սակայն Բառնաբաս առաւ Սոդոսը, առաքեալներուն տարաւ եւ անոնց պատմեց, թէ ի՛նչպէս Սոդոս նամբուն վրայ Տէրը տեսած եւ անոր հետ խօսած է, եւ թէ ի՛նչպէս Յիսուսի անունով համարձակօրէն քարոզած է Դամասկոսի մէջ: Անկէ ետք Սոդոս առաքեալներուն հետ կը մնար ու կը շրջէր Երուսաղէմի մէջ, եւ համարձակօրէն կը քարոզէր Տէր Յիսուսի անունով: Կը խօսէր ու կը վիճէր յատկապէս յունաստան հրեաներուն հետ, որոնք զինք սպաննելու ձեռք կը խորհէին: Հաւատացեալ եղբայրներ երբ իմացան, Կեսարիա փախցուցին Սոդոսը, եւ հոնկէ ալ Տարսոն դրկեցին:

Եկեղեցին ամբողջ Հրէաստանի, Գալիլիայի ու Սամարիայի մէջ խաղաղութիւն կը վայելէր եւ կը զօրանար: Սուրբ Հոգիի օգնութեամբ հաւատացեալները կը բազմանային եւ Տիրոջ երկիւղով կ'ապրէին:



ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ

2.1-10

Հետեւաբար մէկդի ձգեցէ՛ք ամէն տեսակի չար մտածում ու նենգութիւն, կեղծաւորութիւն ու նախանձ եւ ամէն տեսակի չարախօսութիւն: Որպէս հաւատքի նորածին մանուկներ՝ Աստուծոյ խօսքի անխարդախ կաթին փափաքեցէ՛ք, որպէսզի անով անիք եւ փրկութեան հասնիք: «Անգամ մը, որ Տիրոջ խօսքին համը առնէ՛ք, պիտի տեսնէք, թէ քաղցր է ան»: Մօտեցէ՛ք անոր, Քրիստոսի, որովհետեւ ինքն է այն կենդանի վէմը, որ թէեւ մարդոցմէ մերժուած՝ բայց Աստուծմէ ընտրուած պատուական վէմն է: Այդպիսով դուք ալ, որպէս կենդանի քարեր՝ Քրիստոսի վէմին վրայ կը կառուցուիք իբրեւ հոգեւոր տաճար: Իւրաքանչիւրդ կը դառնաք անարատ քահանաներ եւ Յիսուս Քրիստոսի միջոցաւ հոգեւոր ընդունելի պատարագ կը մատուցանէք Աստուծոյ: Որովհետեւ մարգարէութեան մէջ գրուած է. «Ահա ես Սիոնի մէջ կը դնեմ ընտրուած վէմ մը, պատուական անկիւնաքար մը: Անոր հաւատացողը յուսախաբ պիտի չըլլայ»:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ ԿԱՄ ԿԱՆԱՉ ԿԻՐԱԿԻ

Աշխարհամատուռ կը նշանակէ երեւելի մատուռ կամ եկեղեցի: Բառը կազմուած է աշխարհ եւ մատուռ բառերէն: Աշխարհամատուռ, նաեւ կը նշանակէ աշխարհի առաջին մատուռը: Զատկուան տօնին յաջորդող երկրորդ Կիրակին եկեղեցական տօներու շարքին, կը յիշատակուի նաեւ Աշխարհամատուռ կամ Կանաչ Կիրակի տօնը: Աշխարհամատուռը, մեզի կը յիշեցնէ Քրիստոնէութեան առաջին մատուռը, որ հիմնուեցաւ վերնատան կից, առաքեալներու կողմէ:

Առաքեալները, Յիսուսի կարգադրութեան համաձայն, իր համբարձումէն յետոյ, կը հաւաքուէին վերնատուն՝ Սիոնի բարձունքին, կը յիշէին իրենց վարդապետը եւ կը կատարէին վերջին ընթրիքի ժամանակ Անոր տուած պատգամը: Կ'օրհնէին հացն ու գինին, միասին կ'աղօթէին եւ միասնաբար կը ճաշէին: Հաւաքական կեանք կ'ապրէին: Աշակերտներուն հաւաքոյթներու առաջին աղօթաՎայրը կոչուեցաւ աշխարհի առաջին եկեղեցին՝ Աշխարհամատուռ, եւ անոր յիշատակին եկեղեցւոյ մէջ նշանակուեցաւ տօնական օր մը:

Աշխարհամատուռն անոր կրօնական եւ եկեղեցական տեսակէտէն մեծ նշանակութիւն կը ներկայացնէ: Ան Քրիստոսի հաստատած իտէալ եկեղեցին էր, եւ այս օրերու քրիստոնեայ աշխարհի, մանաւանդ եկեղեցւոյ կրօնապետներու երազած իտէալ եկեղեցին է, ուր բոլոր քրիստոնեաները կրնան միասնաբար աղօթել, հաղորդուիլ եւ գործել:

Աշխարհամատուռն Կիրակին կը կոչուի նաեւ Կանաչ Կիրակի: Կանաչ կոչումի ճշգրիտ իմաստը դժբախտաբար ծանօթ չէ մեզի: Ոմանք այլաբանական իմաստ կը տեսնեն, որպէս նմանութիւն բնութեան եւ առաջին եկեղեցւոյ միջեւ: Կանաչ Կիրակին կը նմանցնեն բնութեան մէջ ծաղկող, ծլարձակող եւ աճող կեանքին, որ կենդանութիւն ու թարմութիւն կու տայ աշխարհին եւ մարդկութեան: Աշխարհամատուռն ալ որպէս Քրիստոսի ցանած սերմի առաջին կանաչ ծիլը, աճեցաւ, ծլարձակեց, բազմացաւ եւ դարձաւ աշխարհին վրայ տարածուած եկեղեցին:

Ի՞նչ է խունկին եւ ինկարկութեան նշանակութիւնը:

Աստուծոյ խունկ մատուցելը կը նշանակէ սրտի խորքէն վեր բարձրացող ջերմեանը աղօթքի, որ հանելի է Աստուծոյ առջեւ ու նաեւ յարգանքի եւ օրհնութեան արտայայտութիւնն է մարդուն իր Արարիչին հանդէպ:

Ժողովուրդին ինկարկելը կը նշանակէ Աստուծոյ շնորհաց բաշխումին, գոր կը կատարէ պատարագիչ քահանան թափօրի ատեն իր օրհնութեան աղօթքներով միատեղ: Պատարագի ընթացքին ալ երբ պատարագիչը մէջ ընդ մէջ օրհնութիւն կը բաշխէ, սարկաւազը՝ որպէս Ս. Սեղանի սպասաւոր եւ օգնական քահանայի, անոր հետ կը դառնայ դէպի ժողովուրդը եւ կը ինկարկէ:

Սարկաւազին կողմէ քահանային կատարուած ինկարկութիւնը յարգանքի արտայայտութիւնն է Աստուծոյ ծառային՝ դեսպանին հանդէպ: